ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1724-Ա « 06 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ Հ.46 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լիլիթ Ավետիսի Ավետիսյանի (ծնված 08.11.1975թ.), Սյուզաննա Ավետիսի Ավետիսյանի (ծնված 10.05.1981թ.) 20.03.2019թ. հ.Ա-2733 դիմումը: Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.46 հասցեում գտնվող ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 170.4քմ, որից 66.6քմ (73.0քմ օրինական հողամասից պահպանվել է 66.6քմ) մակերեսով հողամասը Լիլիթ Ավետիսի Ավետիսյանին, Սյուզաննա Ավետիսի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 17.02.2009թ. հ.2561551 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 11.04.2019թ. հ.ԱՏ-09/04/2019-1-0032 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 13.02.2024թ. հ.Հ-405 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.08.2025թ. հ.20-Ել-Ա-2733 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.46 հասցեի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.46 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լիլիթ Ավետիսի Ավետիսյանի, Սյուզաննա Ավետիսի Ավետիսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 66.6քմ մակերեսով հողամասին կից 103.8քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 103.8քմ մակերեսով հողամասի (որից 100.2քմ ընդհանուր համատեղ սեփականություն է Վալենտինա

Ներսեսյանի, Գոհար Ամրոյանի, Լևոն Ամրոյանի, Գագիկ Աբրահամյանի հետ, իսկ 3.6քմ՝ Գագիկ Աբրահամյանի հետ) և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.46 հասցեում գտնվող 170.4քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ